ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **20/12/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ
ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 23 անդամներ՝

Էդուարդ Բաբայանը, Արմեն Քոսակյանը, Մետաքսյա Բաբայանը, Դավիթ Զարոյանը, Տիգրան Ղազարյանը, Անի Թենեքեջյանը, Էդվին Կարապետյանը, Սեթրակ Սեթրակյանը, Սեդա Ավետիսյանը, Հասմիկ Խաչատրյանը, Ատոմ Բադալյանը, Վահե Հարությունյանը, Նորայր Զարգարյանը, Արման Մեղրյանը, Պավել Ցուգունյանը, Գրիգոր Գուլյանը, Նաիրա Մելիքյանը, Նորայր Միքայելյանը, Մելինե Գասպարյանը, Վլադիմիր Առաքելյանը, Մարգարիտա Հարությունյանը, Նաիրի Հակոբյանը, Տիգրան Գեղամյանը:

Բացակա էին՝ Էմիլ Հարությունյանը, Գոռ Գալստյանը, Նազիկ Հարությունյանը (որոնք իրենց բացակայության պատճառի մասին չէին տեղեկացրել) և Գևորգ Պողոսյանը (ավագանու նիստի ժամանակ խմբակցության ղեկավար Պավել Ցուգունյանը տեղեկացրեց, որ Գևորգ Պողոսյանը բացակայում է վատառողջ լինելու պատճառով):

Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Ավագանու նիստին ներկա էին նաև հրավիրված պատվավոր հյուրեր և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:

Աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը հայտարարեց, որ գրանցվել են համայնքի ավագանու 23 անդամները և ամբիոնի մոտ հրավիրեց ընտրված համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանը ստանձնեց իր լիազորությունները համայնքի բնակիչներին տրված հետևյալ երդմամբ.

«Ստանձնելով Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ *ե ր դ վ ու մ ե մ.*
Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:
Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Կոտայքի թեմի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մաշտոց քահանա Բաբայանը ողջունեց, շնորհավորեց և օրհնեց համանքի նորընտիր ղեկավարին, ավագանու անդամներին, բնակչությանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Զարոյանը: Երդման արարողության նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ _____
ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ _____
ՄԵՏԱՔՍՅԱ ԲԱԲԱՅԱՆ _____
ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ _____
ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ _____
ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ _____
ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____
ՍԵԹՐԱԿ ՍԵԹՐԱԿՅԱՆ _____
ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____
ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____
ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ _____
ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ _____
ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ _____
ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ _____
ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ _____
ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ _____